ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 11 >> դեկտեմբեր 2018թ. N 162

ք. Արմավիր

<<ՎԱՐԴԱՆԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1793-Ն որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կանոնադրության 15-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2018 թվականի դեկտեմբերի 4-ի N 403-Ա և 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 404-Ա որոշումները, <<Վարդանաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի և գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Է. Պետրոսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Վարդանաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Ֆլորա Տոնոյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Է. Պետրոսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հնգօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 11.12.2018 17:49:31 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հ.

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2018 թվականի Դեկտեմբերի 11-ի

N 168 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Է. Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

Անդամներ՝

Գ. Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

Ս. Սաֆարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնող՝

Հ. Հովասափյան - <<Վարդանաշենի միջնակարգ դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն:

Ընդունող՝

Ռ. Կարապետյան - << Վարդանաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 10.12.2018 10:22:31 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217